ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Հայոց լեզվի և գրականության
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Հ. Բաբուռյան

Արձանագրություն № ___16___

«__15__» _____մայիս____ 2023 թ.

ՀԼԳ/Բ-007 «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)»

ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011401.00.6 –Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.19.6 -Հայոց լեզու և գրականություն_
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականության
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ հեռակա
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ՝ 2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ

Դասախոս(ներ) ՝ Հ. Հարությունյան
/անուն, ազգանուն/

էլ. հասցե/ներ՝ harutyunyanhasmikp@yandex.ru

Վանաձոր- 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները 3
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները 3
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների 4
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը 4
7. Ուսումնական աշխատանքները տեսակները 5
8. Դասավանդման մեթոդներ..... 6
9. Ուսումնառության մեթոդները 6
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը 7
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ..... 9
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ..... 10
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ 10
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ..... 19
    12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ 30
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում..... 31
14. Գնահատում..... 33
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում..... 33
    14.2. Հարցաշար..... 33
    14.3. Գնահատման չափանիշներ..... 34
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ..... 37

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

«Հլ/Բ-007 Ժամանակակից հայոց լեզու (բառագիտություն)**»** դասընթացի առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպմանը, դասավանդման որակի բարձրացմանը: Դասընթացը կարևորվում է հանրակրթության բնագավառում ուսուցիչների պատրաստման գործընթացում, ներառված է *011401.19.6 - Հայոց լեզու և գրականություն* կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հիմնական մասնագիտական» կրթամասում:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

2.1. Դասընթացի նպատակն է մասնագիտական հիմնարար գիտելիքներով, տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով ապագա ուսուցչին, գիտնական-հետազոտողին զինելը:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

- Սովորեցնել դասընթացի տեսական հիմքերը:
- Բացատրել ժամանակակից հայերենի բառային համակարգի օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

«Ժամանակակից հայոց լեզու (բառագիտություն)**»** դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների՝ հայերենի հնչյունային համակարգի վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, հմտությունների առկայությունը:

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

«Ժամանակակից հայոց լեզու (բառագիտություն)**»** դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա հայերենի բառագիտության տեսական հիմունքները,
2. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
3. տիրապետի լեզվաբանական հետազոտության մեթոդներին,
4. կարողանա մասնագիտական գիտելիքների շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝
ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
Միջանձնային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝
ՄԶԿ2 թիմային աշխատանք,
Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝
ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու ունակություն,
ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,
ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն:

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)
ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Ժամանակակից հայոց լեզու (բառագիտություն)**»** դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել դպրոցում մասնագիտական գործունեության ընթացքում, բարձրագույն կրթության երկրորդ շրջափուլի ընթացքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և գիտահետազոտական աշխատանքի բնագավառում գիտական

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:
[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**4 կրեդիտ/120 ժամ**

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ
Դասախոսություն	6
Գործնական աշխատանք	10
Սեմինար պարապմունք	
Լաբորատոր աշխատանք	
Ինքնուրույն աշխատանք	104
Ընդամենը	
Ստուգման ձևը (ստուգարք/ **ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)**	Հանրագումարային քննություն

7. **Ուսումնական աշխատանքների տեսակները**[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների,

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

խմբային աշխատանքների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:
  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
  - **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝**[6] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:

9. **Ուսումնառության մեթոդներն են**[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում….

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

Հեռակա ուսուցման համակարգ

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների		
		դասախ.	Գործ.	Ինքն.
1	Բառի հասկացությունը: Իմաստաբանություն: Իմաստափոխություն, տեսակները: Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի:	1	2	15
2	Բառակազմություն: Հիմնական և երկրորդական ձևույթներ, բարդ բառերի տեսակները: Հարադրական բարդություններ:	1	2	18
3	Համադրական բարդություններ: Հապավական բարդություններ:	1	2	20
4	Ածանցում: Ածանցների դասակարգումը (ըստ շարադ., ըստ ձևաբ., ըստ ծագման, ըստ գործածականության):	1	2	18
5	Ժամ. հայոց լեզվի բառապաշարն ըստ ծագման:	1	1	15
6	ժամ. Հայոց լեզվի բառապաշարի համաժամանակյա դասակարգումը:	1	1	18
Ընդամենը		6	10	104

10. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
Պարտադիր գրականություն

	Հեղինակ	Անվանում	Հրատարակման տարի
1.	Աբեղյան Մ.	Հայոց լեզվի տեսություն	1965
2.	Աղայան Է.	Լեզվաբանության հիմունքներ	1987
3.	Աղայան Է.	Ընդհանուր և հայկական բառագիտություն	1984
4.	Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս.	Ժամանակակից հայոց լեզու	1979
5.	Մարգարյան Ա.	Ժամանակակից հայոց լեզու, բառակազմություն	1990
6.	Մարգարյան Ա.	Ժամանակակից հայոց լեզու, բառագիտություն	1993
8.	Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ.	Հայոց լեզու, հ1, Ա պրակ	1980
9.	Ջահուկյան Գ.	Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները	1974
10.	Սևակ Գ.	Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց	2009
11.	Սուքիասյան Ա.	Ժամանակակից հայոց լեզու	1982

Լրացուցիչ գրականություն

	Հեղինակ	Անվանում	Հրատարակման տարի
12.	Եզեկյան Լ.	Հայոց լեզու	2005
13.	Հեղինակային կոլեկտիվ	Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում	1973
14.	Հեղինակային կոլեկտիվ	Հայոց լեզվի կառուցվածքը	1975

11. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

11.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

	Թեմա	Նպատակը, պահանջները	Դասախոսության ընթացքում ուսումնասիրվող հարցերը	Առաջադրանքներ ուսանողներին դասախոսությունը նախապատրաստման համար	Գրականություն
1	Դասընթացի ծրագրի ներկայացում և ուսումնական գործողությունների պլանավորում:	Ուսանողներին նախապատրաստել «Բառագիտություն» դասընթացի ուսումնասիրությանը:	1. Բառագիտությունը որպես լեզվի տեսության բաժին: 2. Դասընթացի առանձին բուհական բաղադրիչների նպատակը և գնահատման համակարգը:	Ծրագրի ընթերցում: Հարցերի նախապատրաստում	ՊԳ 1, Լ/Գ 2:

2	Բառագիտության առարկան (պատմ.և նկարագր.բառագիտ.): Բառի հասկացությունը: -1	1.Պատմական բառագիտության մեթոդների, տեղի և դերի բացահայտում: 2.Նկարագրակ. բառագիտ. բառագիտության մեթոդների, տեղի և դերի բացահայտում: 3.բառի հատկանիշների վերհանում:	1.Պատմական բառագիտ., 2.Նկարագրակ. բառագիտ. 3.Բառի հասկացությունը:	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ուսումնասիրություն	ՊԳ 1,4, 5,6, Լ/Գ 2, 3
3	Իմաստաբանություն: Իմաստափոխություն, տեսակները:	1.Բովանդակության և արտահայտության պլանների(ձև և իմաստ) հարաբերակցության հարցերի պարզաբանում: 2.Իմաստափոխության տեսակներն ըստ իմաստափոխական հիմունքների և իմաստային զարգացման արդյունքների. խնդրին առնչվող հարցերի պարզաբանում:	1. Բառիմաստի տեսակները: 2. Բառ և հասկացություն: Իմաստափոխության տեսակները:	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ուսումնասիրություն: Բառարանային աշխատանք:	ՊԳ 1,4,7, ԼԳ 2,3
4	Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի: -1	Բառերի ձևաիմաստային խմբերի տեսակների բնութագրում և դրանց լեզվաոճական արժեքի գնահատում:	1. Հնչույթակազմերով (ձևերով) տարբեր, իմաստով նույնը կամ առնչակից բառեր: 2. Հնչույթակազմերով (ձևերով) տարբեր, իմաստներով հակառակ կամ միմյանց ժխտող բառեր:	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ուսումնասիրություն:	ՊԳ 1,4, ԼԳ 5:

			3. Հնչույթակազմերով (ձևերով) նույնը, իմաստներով տարբեր բառեր: 4. Հնչույթակազմերով (ձևերով) մոտ, նման, իմաստներով տարբեր կամ առնչակից բառեր:	Բառարանային աշխատանք:	
5	Բառակազմություն: Հիմնական և երկրորդական ձևույթներ, բարդ բառերի տեսակները:-1	Ձևույթի ընկալումը հայ և ընդհանուր լեզվաբանության մեջ: Ձևույթի բնութագրի էական կողմերի բացահայտում և հակասությունների մեկնաբանում:	1. Հիմնական և երկրորդական ձևույթների բնութագիրը: 2. Հիմնակ. բառակազ. ձևույթներ: 3. Երկրորդ. բառակազմ. և բառահարաբեր. ձևույթներ:	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ուսումնասիրություն: Հանձնարարված տեքստի բառակազմական վերլուծություն:	ՊԳ 1,2, 3,4, ԼԳ 2,3:
6	Հարադրական բարդություններ:	Հարադրական բարդությունների առանձնահատկությունների բացահայտում:	1. Բայական հարադրություննե 2. Անվանական հարադրություններ: 3. Հատվածական բարդություններ:.	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ուսումնասիրություն: Հանձնարարված տեքստի բառակազմական վերլուծություն:	ՊԳ 1,2,3, Լգ 1:
7	Համադրական բարդություններ: Հապավական բարդություններ:	Իսկական և կցական բարդությունների առանձնահատկությունների բացահայտում:	1. Իսկական բարդություններ: 2. Կցական բարդություններ::	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության	ՊԳ 1,4,5, ԼԳ

				ուսումնասիրություն: Հանձնարարված տեքստի բառակազմական վերլուծություն:	
8	Ածանցում: Ածանցների դասակարգումը (ըստ շարադ., ըստ ձևաբ., ըստ ծագման, ըստ գործածականության): -1	Ածանցների ծագման և կիրառության առանձնահատկությունների բացահայտում:	1. Ածանցների ծագումը: 2. Ածանցների տեսակներն ըստ դիրքի: 3. Ածանցների տեսակներն ըստ խոսքիմասային արժեքի: 4. Ածանցների տեսակներն ըստ գործածականության:	Դասախոսության նյութի ընթերցում: Վարժությունների և առաջադրանքների կատարում:	ՊԳ 1,4,5, ԼԳ 6,7,8:
9	Ժամ. հայոց լեզվի բառապաշարը: Ժամ.հայոց լեզվի բառապաշարնըստ ծագման:-1	Ժամանակակից հայերենի բառապաշարի շերտերի բացահայտում և բնութագրում:	1. Բնիկ հայերեն բառեր: 2. Հին և հնագույն փոխառություններ: 3. Նոր և նորագույն փոխառություններ:	Դասախոսության նյութի ընթերցում: Վարժությունների և առաջադրանքների կատարում:	ՊԳ 1,2,3,4,5, ԼԳ6,7,8:
10	Ժամ. հայ բառապաշարի տարաժամանակյա դասակարգումը:	Ժամանակակից հայերենի բառապաշարի պատմական շերտերի վերհանում	1. Համահայկական բառեր: 2. Գրաբարյան բառեր: 3. Միջինհայերենյան բառեր: 4. Աշխարհաբարյան բառաշերտ՝ արևմտահայերեն և արևելահայերեն ենթախմբերով:	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ուսումնասիրություն	ՊԳ 1,2,3, 4,5,6, ԼԳ 4,5,6:

11	ժամ. հայ բառապաշարի համաժամանակյա դասակարգումը:-1	Ժամանակակից հայերենի բառապաշարի լեզվառճական նկարագրի վերհանում:	1. Համագործածական շերտին պատկանող բառեր: 2. Գրական-գեղարվեստական լեզվի բառաշերտ: 3. Հրապարակախոսական ոճի բառաշերտ: 4. Վարչագործարարական ոճի բառաշերտ:շ 5. Գիտական ոճին պատկանող բառաշերտ:	Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ուսումնասիրություն	ՊԳ 2,3, 5,6, ԼԳ 3,5,6:

11.2.ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՔԱՐՏ

h/h	***Թեմա***	**Ուսումնասիրվող հարցեր**	***Ժամաքանակ***	**Ստուգման ձևը**	**Գրականություն**[8]
1.	Բառի հասկացությունը: Իմաստաբանություն: Իմաստափոխություն, տեսակները: Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի:	1.Բառագիտությունը որպես ուսմունք բառի մասին 2.Բառի սահմանումը: 1.Բառի ձև և բառիմաստ, 2.Մենիմաստություն: 3.Բազմիմաստություն: 4.Առարկայական իմաստ: 5.Աճանցային իմաստ: 6. Բառարանային իմաստ, ուղղակի և փոխաբերական իմաստներ: 7.Թանձրացական և վերացական իմաստներ: 8.Պատճառաբանված և դիպվածային իմաստներ:	2	Բանավոր հարցում: 10 հարց պարունակող թեստ: Ճեպահարցում: Գրավոր	

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		1.Բառիմաստի ընդլայնում: 2.Բառիմաստի նեղացում: 3.Բառիմաստի շրջում: 4.բառիմաստների փոխհաջորդում: 1.Հոմանիշներ: 2.Հականիշներ: 3.Համանուններ: 4.Հարանուններ:		աշխատանքի ստուգում:	
2.	Բառակազմություն: Հիմնական և երկրորդական ձևույթներ, բարդ բառերի տեսակները: Հարադրական բարդություններ:	1.Ձևույթի սահմանումը և նրա խոցելի կողմերը: 2.Հիմնական ձևույթներ: 3.Երկրորդական բառակազմական ձևույթներ: 4.Երկրորդական բառահարաբերրական ձևույթներ: 1.Վերլուծականության և համադրականության ընկալումները բառակազմության մեջ: 2.Հարադիր բայեր և զուգաբայակaն հարադրություններ. դրանց շարահյուսական կարգավիճակը շարակարգում: 3.Անվանական հարադրություններ. դրանց շարահյուսական արժեքը: 4.Վերլուծական կազմությունների ուղղագրական առանձնահատկությունները:	2	Բանավոր հարցում: Գրավոր աշխատանքի ստուգում:	
3.	Համադրական բարդություններ: Հապավական բարդություններ:	1.Իսկական բարդություններ 2. Կցական բարդություններ	2	Բանավոր հարցում: Գրավոր աշխատանքի ստուգում:	
4.	Ածանցում: Ածանցների դասակարգումը (ըստ շարադ., ըստ ձևաբ., ըստ	Ածանցների ծագման և կիրառության առանձնահատկությունների բացահայտում:	2	Բանավոր հարցում: Գրավոր	

	ծագման, ըստ գործածականության):			աշխատանքի ստուգում: Առցանց առաջադրանքներ:Վարժությունների սխալների վերհանում և ուղղում:	
5.	Ժամ. հայոց լեզվի բառապաշարն ըստ ծագման:	1.Ժամանակակից հայերենի բառապաշարի շերտերն ըստ ծագման: 2.Բնիկ հայկական 3.Փոխառություններ: 4.Նստվածքային շերտի բառեր:	1	Բանավոր հարցում: Գրավոր աշխատանքի ստուգում:	
6.	ժամ. Հայոց լեզվի բառապաշարի համաժամանակյա դասակարգումը:	1.Համահայկական բառեր: 2.Գրաբարյան բառեր: 3.Միջինհայերենյան բառեր: 4.Աշխարհաբարյան բառաշերտ՝ արևմտահայերեն և արևելահայերեն ենթախմբերով: 1Համագործածական շերտին պատկանող բառեր: 2.Գրական-գեղարվեստական լեզվի բառաշերտ: 3.Հրապարակախոսական ոճի բառաշերտ: 4.Վարչագործարարական ոճի բառաշերտ:շ 5.Գիտական ոճին պատկանող բառաշերտ:	1	Բանավոր հարցում: Գրավոր աշխատանքի ստուգում:	

11.2. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը[9]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[10]
1.	Գեղ. գրականությունից ընտրված տեքստերից դուրս գրել բաղադրյալ կազմությունները և կատարել բառակազմական վերլուծություն:	Հարադիր բայեր և զուգաբայական հարադրություններ. դրանց շարահյուսական կարգավիճակը շարակարգում:	20-21-րդ դդ. Հայ արձակ՝ ըստ ընտրության:	Կիսամյակի ավարտ	գրավոր, բանավոր քննարկում;	Դասընթացի դասախոսություններ: Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն: Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, բառակազմություն
2.	Հր. Աճառյանի «Հայերենի արմատական բառարանից» դուրս գրել տասը արմատ և ներկայացնել դրանց ստուգաբանությունը:	Ժամանակակից հայերենի բառապաշարի շերտերն ըստ ծագման:	Հր. Աճառյան, «Հայերենի արմատական բառարան»	Կիսամյակի ավարտ	գրավոր, բանավոր վերլուծություն:	Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն: Ա. Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, 2004թ.

[9] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

3.	Գեղ. գրականությունից ընտրված տեքստերի բառամթերքը բնութագրել ըստ տարաժամանակյա սկզբունքի:	Ժամանակակից հայերենի բառապաշարի պատմական շերտերը:	20-21-րդ դդ. հայ չափածո՝ ըստ ընտրության:	Կիսամյակի ավարտ	գրավոր, բանավոր վերկուծություն:	Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն: Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, բառակազմություն Ա. Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, 2004թ.

12. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[11]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	Էլ. Գրատախտակ, համակարգիչներ:
Համակարգչային ծրագրեր	powerpoint
Այլ	

[11] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

13. Գնահատում

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[12]:

13.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

13.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Դասընթացն ամփոփվում է կիսամյակի **գրավոր** քննության և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքների հանրագումարային միավորով:

13.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

Ամփոփիչ քննության հարցաշար

1. Բառագիտություն. ուսումնասիրության առարկան, մեթոդները, ենթաբաժիներն իրենց խնդիրներով:
2. Բառի սահմանումը:
3. Բառ, բառույթ, բառաձև, բառի ձև, բառի ներքին ձև:
4. Իմաստաբանություն: Բառիմաստ. նրա տիպերն ու տեսակները:
5. Լիիմաստ և սպասարկու բառեր:
6. Բառի անվանողական դեր և առարկայական վերաբերություն:
7. Մենիմաստություն և բազմիմաստություն:

---

[12]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

8. Ուղղակի և փոխաբերական իմաստ:
9. Փոխաբերություն, փոխանունություն, համընդհանում:
10. Իմաստափոխություն. տեսակները:
11. Իմաստափոխության հիմունքները տեսակները:
12. Ժամանակակից հայերենի բառապաշարի ձևաիմաստային խմբերը: Համանուններ և հարանուններ:
13. Ժամանակակից հայերենի բառապաշարի ձևաիմաստային խմբերը: Հոմանիշներ և հականիշներ:
14. Բառ և ձևույթ:
15. Հիմնական և երկրորդական ձևույթներ: Արմատ և ածանց:
16. Բառային և բայական հիմքեր,
17. Բառակազմական հիմքեր (սերող և բաղադրող, բացարձակ և հարաբերական): Հոդակապ:
18. Բառային կազմ: Հիմնական բառաֆոնդ:
19. Ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման միջոցները՝ ներքին և արտաքին:
20. Բառապատճենումներ, նրանց տեսակները:
21. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը ըստ գործածականության:
22. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի պատմական շերտերը (տարաժամանակյա դասակարգում):
23. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը ըստ ծագման: Բնիկ հայերեն բառեր,
24. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը ըստ ծագման: Հին և նոր փոխառություններ. նրանց արժեքը:
25. Գործուն և ոչ գործուն բառապաշար: Նորաբանություններ: Հնաբանություններ:
26. Ժամանակակից հայերենի բառակազմության միջոցները և եղանակները:
27. Բառերի տեսակները ըստ կազմության. պարզ և բաղադրյալ բառեր:
28. Բարդ բառերի տեսակները:
29. Վերլուծական բարդություններ. տեսակները:
30. Բայական հարադրություններ:
31. Անվանական հարադրություններ:
32. Հատվածական բարդություններ:
33. Համադրական բարդություններ. տեսակները:
34. Կցական բարդություններ:

35. Հապավական բարդություններ:
36. Ածանցում: Ածանցների տեսակներն ըստ դիրքի
37. Ածանցում: Ածանցների տեսակներն ըստ ձևաբանական հատկանիշի:
38. Ածանցների ծագումը: Կենսունակ, ոչ կենսունակ, քարացած ածանցներ:
39. Բառարանագրություն, բառարանների տեսակները:
40. Ժամանակակից հայերենի կետադրության սկզբունքները:

13.4. Գնահատման չափանիշները[13]

Դասընթացի կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատում՝

1. Մասնակցությունը դասընթացին (ընդհանուր գնահատականի 20 միավորը)

- Գնահատման մեթոդը՝
  - Հաճախումների հաշվառում
- Գնահատման չափանիշը՝
- ներկայություն

2. Մասնակցությունը գործնական աշխատանքներին (ընդհանուր գնահատականի 20 %-ը կամ 20 միավոր)

- Գնահատման մեթոդը՝
- բանավոր հարցման արդյունքների հաշվառում՝ կիսամյակի ընթացքում 4 անգամ, յուրաքանչյուր հարցման առավելագույն գնահատականը 5 միավոր:

3. Ինքնուրույն աշխատանքներ (ընդհանուր գնահատականի 20 միավորը)

- Գնահատման մեթոդը՝

- դիտարկվող նյութի մասնագիտական վերլուծության ներկայացման որակ,
- լեզվաբանական այլ բնույթի աշխատանքների ստուգում:

4.Գրավոր քննություն: Հանձնարարությունը տրվում է տարբերակների ձևաչափով՝ յուրաքանչյուր տարբերակում երկու տեսական հարց և մեկ գործնական աշխատանք:

- Գնահատման մեթոդը՝
  Տեսական հարցերի սպառիչ պատասխանի և գործնական խնդրի ճիշտ լուծման գնահատում:

[13] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ 011401.00.6 –Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.19.6 -Հայոց լեզու և գրականություն_
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Հեռակա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/Բ-007 «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	16	Դասախոսություն	6
			Գործնական աշխատանք	10
	Ինքնուրույն	104		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Քննություն			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է մասնագիտական հիմնարար գիտելիքներով, տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով ապագա ուսուցչին, գիտնական-հետազոտողին զինելը:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Իմանա հայերենի բառագիտության տեսական հիմունքները: *Հմտություն* Կարողանա ստացած տեսական գիտելիքները կիրառել գործնականում: *Կարողունակություն* Տիրապետի լեզվաբանական հետազոտությունների մեթոդներին:			
Դասընթացի բովանդակությունը	Բառագիտություն առարկան (պատմ.և նկարագր.բառեր): Բառի հասկացությունը: Իմաստաբանություն: Իմաստափոխություն, տեսակները: Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի: Բառակազմություն: Հիմնական և երկրորդական ձևույթներ, բարդ բառերի տեսակները: Հարադրական բարդություններ:			

	Համադրական բարդություններ: Հապավական բարդություններ: Ածանցում: Ածանցների դասակարգումը (ըստ շարադ., ըստ ձևաբ., ըստ ծագման, ըստ գործածականության): Ժամ. հայոց լեզվի բառապաշարը: Ժամ.հայոց լեզվի բառապաշարն ըստ ծագման: Ժամ. հայ բառապաշարի տարաժամանակյա դասակարգումը: ժամ. հայ բառապաշարի համաժամանակյա դասակարգումը:
Գնահատման մեթոդները և չափանիշները	Քննության ստուգման ձևը և գնահատման մեթոդը՝ -գրավոր/բանավոր քննություն՝ թեստային առաջադրանքների, գործնական աշխատանքի և տեսական հարցերի համակցությամբ, պատասխանների գնահատում դասախոսի կողմից՝ յուրաքանչյուր հարցի համար նախապես նշված միավորների հատկացմամբ: Գործնական աշխատանքներին գնահատման մեթոդները՝ -բանավոր հարցման կամ գրավոր աշխատանքի արդյունքների հաշվառում Ինքնուրույն աշխատանքների գնահատման մեթոդը՝ Ներկայացված աշխատանքի համակարգայնության, շարադրանքի ամբողջականության և տրամաբանվածության, ինքնուրույն դիտարկումների կարողությունների գնահատում: - բնագրային նյութի լեզվաբանական վերլուծության ներկայացման որակ, - բառարանային քննական աշխատանքների ստուգում: **Գնահատման չափանիշները** • Տեսական գիտելիքները-20: • Գործնական աշխատանքները-20 • Ինքնուրույն աշխատանքը-20 • Գրավոր քննություն -40
Գրականություն	Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, բառակազմություն Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, բառագիտություն Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, հ1, Ա պրակ

	Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու